ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1889-Ա « 10 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՆԽԵՆ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «ԿԵՐԽԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Բաղդասարյանի հրավերը, Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանի №Ն/21737-26 գրությունը՝ աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում, բնապահպանական տեխնոլոգիաների առաջատար ցուցահանդես IFAT Munich 2026 ցուցահանդեսին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2026 թվականի մայիսի 5-ից 8-ը ներառյալ, գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մյունխեն քաղաք հետևյալ կազմով.

Արսեն Կարոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ
Հայկ Երգենյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ
Սաշա Կատվալյան	«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ օրապահիկի, որը Արսեն Կարոյանի և Հայկ Երգենյանի համար կվճարվի Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցներից, իսկ Սաշա Կատվալյանի օրապահիկը կվճարվի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի 2026 թվականի բյուջեի միջոցներից:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանի և նույն վարչության պետի տեղակալ Հայկ Երգենյանի բացակայության ընթացքում վարչության պետի և վարչության պետի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Գրիգորի Ոստանիկյանին:

4.«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն հիմնարկի տնօրենի տեղակալ Արտյոմ Աբգարյանին:

5.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ